ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
*1 հոկտեմբերի 2012 թ.*
*Պետական գրանցման թիվ 60512357*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

26 սեպտեմբերի 2012 թ. N 844-Ն
ք. Երևան

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի «թ1» կետով և հիմք ընդունելով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդը *որոշում է.*

1. Սահմանել քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովների ձևավորման, գործունեության կարգը և նրանց գործառույթները՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի մայիսի 31-ի «Քաղաքացիական ծառայողի էթիկայի կանոնները հաստատելու մասին» N 13-Ն և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի դեկտեմբերի 1-ի «Էթիկայի հանձնաժողովների կանոնադրությունը հաստատելու մասին» N 1050-Ն որոշումները:

ՀՀ քաղաքացիական ծառայության
խորհրդի նախագահ
Մ. Բաղդասարյան

Հավելված
ՀՀ քաղաքացիական ծառայության
խորհրդի
2012 թ. սեպտեմբերի 26-ի
N 844-Ն որոշման

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն իրավական ակտը տարածվում է «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված մարմինների (այսուհետ՝ համապատասխան մարմին) քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովների (այսուհետ՝ Հանձնաժողով) վրա:

2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով, սույն իրավական ակտով և այլ իրավական ակտերով:

3. Յուրաքանչյուր համապատասխան մարմնում ստեղծվում է Հանձնաժողով, որը ձևավորում է համապատասխան մարմնի ղեկավարը միաժամանակ նշանակելով Հանձնաժողովի նախագահ և քարտուղար:

4. Հանրապետության Նախագահի և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմերում Հանձնաժողովը ձևավորում է աշխատակազմի ղեկավարը:

5. Հանձնաժողովը բաղկացած է քաղաքացիական ծառայող համարվող առնվազն 5 անդամից: Հանձնաժողովի կազմում ընդգրկվող քաղաքացիական ծառայողները պետք է զբաղեցնեն առնվազն գլխավոր խմբի պաշտոն:

6. Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարեցվում են՝

1) անձնական դիմումի հիման վրա.

2) առնվազն երեք անգամ Հանձնաժողովի նիստերին անհարգելի բացակայելու դեպքում.

3) էթիկայի կանոնները խախտելու դեպքում:

7. Եթե Հանձնաժողովի որևէ անդամի մասնակցությունը Հանձնաժողովի հետագա աշխատանքներին դառնում է անհնար, ապա Հանձնաժողովի կազմը համալրվում է՝ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

8. Հանձնաժողովի աշխատանքների նյութատեխնիկական և կազմակերպական աջակցությունն իրականացնում է համապատասխան մարմնի աշխատակազմը:

## II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9. Հանձնաժողովի հիմնական խնդիրն է՝ նպաստել համապատասխան մարմնում էթիկայի կանոնների պահպանմանը:

10. Հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակում՝

1) քննության է առնում իրեն ուղղված հարցերը.

2) քննարկվող հարցերի վերաբերյալ ընդունում է եզրակացություններ կամ պարզաբանումներ, ներկայացնում միջնորդություններ.

3) Քաղաքացիական ծառայության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ). կամ համապատասխան մարմնի առաջարկությամբ անցկացնում է ուսումնասիրություններ և ներկայացնում պարզաբանումներ կամ եզրակացություններ.

4) իր գործունեության վերաբերյալ յուրաքանչյուր կիսամյակ հաղորդում է ներկայացնում Հանձնաժողով ձևավորելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին.

5) սահմանում է իր աշխատակարգը.

6) իրականացնում է սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ